ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«05» 10 2023 թ.
№ ՊԳ3/2-1251

«Ռոյալսիս Էնջինիրինգ» ՍՊԸ
տնօրեն՝ Ա. Բաղդասարյանին
հասցե՝ Ինտերշոր Զամբերս, Փ/Ա 4342, Ռոուդ
Թաուն, Տորտոլա, Բրիտանական Վիրջինյան կղզիներ,
հեռ.+374-10-48-91-90
էլ. հասցե՝ royalsys.engineering@gmail.com

ՀՀ պաշտպանության նախարարության և «Ռոյալսիս Էնջինիրինգ» ՍՊ ընկերության միջև 30.06.2022թ. կնքված N ՄԱԱՊՁԲ-22-4-11 գնման պայմանագրի (փոփոխություն №1 առ 05.12.2022թ.) (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը ոչ ուշ, քան 2023թ. հունվարի 4-ը պետք է մատակարարեր վերը նշված Պայմանագրի 3-րդ չափաբաժնի մասով նախատեսված 2500 հատ, 4-րդ չափաբաժնի մասով նախատեսված 1300 հատ և 5-րդ չափաբաժնի մասով նախատեսված 1000 հատ ապրանքներ: 25.01.2023թ. դրությամբ «Ռոյալսիս Էնջինիրինգ» ՍՊԸ-ի կողմից վերոնշյալ քանակներն ընդհանրապես չեն մատակարարվել, որի արդյունքում Պայմանագիրը նշված չափաբաժինների մասով՝ համապատասխանաբար 1500, 500 և 762 հատի մասով 2023թ. փետրվարի 14-ին միակողմանի մասնակի լուծվել էր:

Քանի որ 30.09.2023թ. դրությամբ «Ռոյալսիս Էնջինիրինգ» ՍՊԸ-ի կողմից նշված չափաբաժինների մնացած քանակները, ինչպես նաև Պայմանագրի 6-րդ չափափաբաժնով նախատեսված 500 հատ ապրանքները ևս չեն մատակարարվել, ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի «բ» ենթակետը (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի)՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2023թ. հոկտեմբերի 05-ին միակողմանի՝ նշված չափաբաժինների մասով ևս լուծել է Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Ռոյալսիս Էնջինիրինգ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 150 291 843 ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, որը հաշվարկված է մինչև 30.09.2023թ. դրությամբ, ինչպես նաև մատակարարումների ուշացումների հետևանքով «Ռոյալսիս Էնջինիրինգ» ՍՊԸ-ի նկատմամբ հաշվարկվել է 23 852.4 ԱՄՆ դոլար տույժ, որին համարժեք ՀՀ դրամը ևս պետք է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին, իսկ Պայմանագրով նախատեսված թվով 6 անուն ապրանքների գնի 80 տոկոսի չափով ընկերությանը հատկացված 2 943 024 ԱՄՆ դոլարի կանխավճարի մնացորդը՝ 2 492 524 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը, փոխանցել 900005570115 հաշվեհամարին:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am